Երևանում կբարձրանան տուրքերը և վճարները

Վերջին օրերին հանրության լայն շրջանակներ քննարկում են Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի առանձին ծախսային հոդվածների աճի կամ նվազման պատճառները, հիմնավորումները: Նոր քաղաքային իշխանությունը մտադրված է շուրջ 1 մլրդ ՀՀ դրամով ավելացնել վարչական ծախսերը՝ միաժամանակ կրճատելով կամ անտեսելով տնտեսական և սոցիալական համայնքային հիմնախնդիրները

Սակայն բյուջեի քննարկումը պետք է ուղեկցվի ոչ միայն ծախսային հոդվածների, այլ նաև եկամտային մասի վերլուծությամբ: Միայն այդ պարագայում հնարավոր է տալ բյուջեի նախագծի ամբողջական գնահատականը: Այնինչ այս ողջ քննարկումների մեջ մոռացության է մատնված այն հանգամանքը, թե Երևանի քաղաքապետարանը որտեղից կամ ում հաշվին է հավաքագրելու այդ գումարները՝ հետագայում ծախսելու նպատակով:

Ամեն տարի Երևանի բյուջեի նախագծի հետ մեկտեղ շրջանառության է դրվում Երևան քաղաքում տեղական վճարների և տուրքերի մասին որոշման նախագիծը, որը կոչված է ապահովել քաղաքապետարանի բյուջեի եկամտային մասը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ Երևան քաղաքում տեղական վճարների 2019 թվականի դրույքաչափերը 2018 թվականի սահմանված դրույքաչափերի նկատմամբ կրել են էական փոփոխություններ (Տե՛ս Աղյուսակ 1-ը):
2019 թվականին 20 տոկոսով կամ 500 ՀՀ դրամով ավելանալու են ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար նախատեսված վճարները: Զգալի աճ է նախատեսված Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների ծառայությունների վճարների մասով, մասնավորապես՝ գործիքային բաժիններում ուսուցման վճարը ավելանալու է 2800 ՀՀ դրամով կամ 16 տոկոսով, երգեցողությանը՝ 4300 ՀՀ դրամով կամ 28,7 տոկոսով, պարարվեստինը՝ 2000 ՀՀ դրամով կամ 15,4 տոկոսով, կերպարվեստինը՝ 300 ՀՀ դրամով կամ 3,3 տոկոսով, թատերարվեստինը՝ 700 ՀՀ դրամով կամ 8,7 տոկոսով: 2018 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ Երևանի ենթակայության 26 երաժշտական և արվեստի դպրոցներում հիմնական ուսուցմամբ սաների թիվը կազմում է 8124: 2019 թվականի ընթացքում երևանցի երեխաները նոր կամ ավելի որակյալ ծառայությունները չեն ստանալու, սակայն վճարելու են ավելի շատ, ինչը լրացուցիչ սոցիալական բեռ կլինի նրանց ընտանիքների համար, իսկ սոցիալապես խոցելի մի շարք ընտանիքներ կհրաժարվեն իրենց երեխաների հաճախումներից արվեստի դպրոցներ:
2019 թվականին նախատեսվել են նոր տեղական վճարներ, մասնավորապես՝ Երևանը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափը սահմանվել է 1500 ՀՀ դրամ, քաղաքաշինական գործունեության և բարեկարգման նպատակով հատկացման /գլխավոր հատակագիծ/ մեկ հայտի տեղական վճարի դրույքաչափը՝ 49300 ՀՀ դրամ:

Աղյուսակ 1.

N	Տեղական վճարի անվանումը	2018 թվականի սահմանված դրույքաչափերը (ՀՀ դրամ)	2019 թվականի առաջարկվող դրույքաչափերը (ՀՀ դրամ)	Աճը	
				ՀՀ դրամ	%
1	Երևանի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար				
	ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար	2500	3000	500	20.0
2	Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների (արտադպրոցական դաստիարակության հաստատություններ) ուսումնական պլանով նախատեսված ծառայությունից օգտվողների համար՝ մեկ				

	երեխայի հաշվարկով.				
ա	գործիքային (դաշնամուր, լարային նվագարաններ, փողային և ազգային նվագարաններ, հարվածային գործիքներ, ակորդեոն, տավիղ, կիթառ) բաժիններում ուսուցում	17500	20300	2800	16.0
բ	երգեցողության ուսուցում	15000	19300	4300	28.7
գ	պարարվեստի ուսուցում	13000	15000	2000	15.4
դ	կերպարվեստի ուսուցում	9000	9300	300	3.3
ե	թատերարվեստի ուսուցում	8000	8700	700	8.7
3	Երևանը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափը սահմանվում է	0	1500	1500	
4	Երևան քաղաքում քաղաքաշինական գործունեության և բարեկարգման նպատակով հատկացման /գլխավոր հատակագիծ/ մեկ հայտի տեղական վճարի դրույքաչափը	0	49300	49300	

Երևան քաղաքում տեղական տուրքերի 2019 թվականի դրույքաչափերը 2018 թվականի համեմատ ևս վերանայվելու են (Տե՛ս Աղյուսակ 2-ը): Ըստ էության, տուրքերի բարձրացման հիմնական նպատակը՝ ֆիսկալ է, այսինքն՝ լցնել համայնքային բյուջեն: Փոփոխությունների արդյունքում լրացուցիչ ֆինանսական բեռ է դրվելու տնտեսավարող սուբյեկտների վրա:

Եվ այսպես՝ 2019 թվականին ոչ հիմնական շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը մինչև 20 քմ դեպքում բարձրացվել է 6000 ՀՀ դրամով կամ 40 տոկոսով, իսկ 20 և ավել քմ դեպքում՝ 10000 ՀՀ դրամ կամ 40 տոկոսով: Վերջին տարիների ընթացքում շինարարության ոլորտը առանց այն էլ դժվար օրեր է ապրում: Վստահաբար այս բարձրացումը ոչ խթանիչ ազդեցություն է ունենալու, ինչպես նաև չի նպաստելու քաղաքացիների կողմից ապօրինի շինարարությունից հրաժարվելուն:

Երևանի քաղաքում վառելիքի մանրածախ վաճառքի վրա բացասական ազդեցություն կթողնի գազալցակայանների և բենզալցակայանների գործունեության վրա տեղական տուրքերի նախատեսվող աճը: **Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի** վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ավելանալու է 250000 ՀՀ դրամով կամ 71.43 տոկոսով, ինչը զգալի բեռ կլինի փոքր և միջին ձեռնարկատերերի համար: Անկախ նրանից, թե տնտեսավարողները մեկ կամ մի քանի վառելիքի տեսակի մանրածախ վաճառք են իրականացնում, նրանք պարտադրված են վճարել միևնույն՝ 600000 ՀՀ դրամի չափով տեղական տուրք: Հատկանշական է, որ բենզինի և դիզելային վառելիքի շուկան գերկենտրոնացած է, այստեղ՝ Ֆլեշ և ՍիՓիԷս ընկերություններին բաժին է ընկնում ներմուծվող վառելիքի շուրջ 90 տոկոսը: Միաժամանակ այս ընկերություններին են պատկանում բենզալցակայանների կամ մանրածախ ցանցի 1/3-ը: Հետևաբար, տեղական տուրքի բարձրացումը առաջին հերթին կհարվածի փոքր բենզալցակայանների գործունեությանը՝ նրանց դուրս մղելով մանրածախ շուկայից: 2018 թվականի հունվարին ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակը հրապարակել է «Վառելիքային շուկայի առկա հիմնախնդիրները և հնարավոր լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայով վերլուծությունը (http://www.maroukhianfoundation.org/am/wp-content/uploads/2018/03/HMF-ARF-Analysis-2-FuelPrices_final.pdf):

Բացի այդ, փոքր և միջին բիզնեսի գործունեության վրա էական բացասական ազդություն կթողնի Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքերի սահմանումը:

Արդյունքում՝ 24:00-ից հետո հիմնականում կգործեն խոշոր տնտեսվարողները կամ կծաղկի ստվերային գործունեությունը: Միաժամանակ, անհասկանալի և չարդարացված է առաջին անգամ կիրառվող տեղական տուրքերի համար միանգամից սահմանել բարձր դրույքաչափեր:

Աղյուսակ 2.

N	Տեղական տուրքի անվանումը	2018 թվականի սահմանված դրույքաչափերը (ՀՀ դրամ)	2019 թվականի առաջարկվող դրույքաչափերը (ՀՀ դրամ)	Աճը	
				ՀՀ դրամ	%
1	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է. (գործակից-7)				
	ոչ հիմնական շենքերի և շինությունների համար				
ա	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	15000	21000	6000	40
բ	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	25000	35000	10000	40
2	Երևանի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է (գործակից-3)	350000	600000	250000	71.43
3	Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է				
ա	առևտրի օբյեկտների համար (գործակից-5)	87500	120000	32500	37.14
բ	հանրային սննդի և զվարճ. համար (գործակից-10)	175000	250000	75000	42.86
գ	Բաղնիքների համար (գործակից-3)	875000	1400000	525000	60
դ	Խաղատների համար (գործակից-3)	1500000	3000000	1500000	100
ե	շահումով խաղերի համար (գործակից-3)	875000	1500000	625000	71.43
զ	Վիճակախաղերի համար (գործակից-3)	262000	450000	188000	71.76

4	Երևանի խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է (գործակից-3)	200000	300000	100000	50
5	Երևանի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է	0	300000	300000	
6	Երևանի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար				
ա	կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար	0	150000	150000	
բ	հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար	0	1500000	1500000	

Այսպիսով՝ Երևանի տարածքում տեղական տուրքերի և վճարների բարձրացումը սոցիալական և տնտեսական բացասական հետևանքներ կառաջացնի Երևանի տնտեսության և երևանցիների համար: Իսկ եթե նկատի ունենանք, որ Երևանում է կենտրոնացած Հայաստանի տնտեսական ակտիվությունը, ապա բացասական ազդեցություն կլինի ողջ երկրի տնտեսության վրա: Հատկապես այն դեպքում, երբ ոչ Երևանի, ոչ էլ պետական բյուջեներով նախատեսված չէ աշխատավարձերի աճ: Այս իրավիճակում Հարկային օրենսգրքի փոփոխություններով նախատեսված «իջեցումների» խթանիչ ազդեցությունը չի նկատվի, քանի որ տնտեսավարող սուբյեկտների դեպքում էական չէ, թե նրանք դա որպես հարկ են վճարում, թե տեղական տուրք: